ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ
«ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF
WORK AND SOCIAL QUESTIONS

“GYUMRI
“CHILDREN’S HOME” SNCO

3103, ք. Գյումրի, Թամանյան-17
☎ (+312) 3 13 28, 3 28 23
Էլ. փոստ: mss.home@mail.ru

Tamanian 17, Gyumri, 3103
☎ (+312) 3 13 28, 3 28 23
E-mail: mss.home@mail.ru

<< 20 >> փետրվարի 2015թ.
N Մ/Պ-15/15

**ՇՀԱՊՁԲ-11/11 ծածկագրով ընթացակարգի արդյունքում տնտեսական, սանհիգենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման շրջանակային համաձայնագրեր կնքած հնարավոր մասնակիցներին**

Հարգելի մասնակից.

Ի լրումն 18 փետրվարի 2015 թվականի N Մ/Պ-15/12 գրության Ձեզ ենք ուղարկում <<Գյումրու <<երեխաների տուն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման համար <<ԳԵՏ-ՇՀԱՊՁԲ-ՍՀ-15/8>> ծածկագրով կազմակերպված ընթացակարգի հրավերի փոփոխությունը («Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետ), կից ներկայացնում ենք փոփոխված պայմանագրի նախագիծը:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Գյումրի, Թամանյան 17 հասցեով, մինչև 2015թ. մարտի 03-ը, ժամը 11:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը, ժամը:

**Հայտերը կբացվեն <<Գյումրու <<երեխաների տուն>> ՊՈԱԿ-ի շենքում, ք. Գյումրի, Թամանյան 17 հասցեով, 2015թ. մարտի 03-ին, ժամը 11:00-ին:**

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը (ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն) և գնային առաջարկը (ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով): Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ՇՀԱՊՁԲ-11/11>> ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

<<Գյումրու <<երեխաների տուն>> ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված ընթացակարգի ծածկագիրն է **<<ԳԵՏ-ՇՀԱՊՁԲ-ՍՀ-15/8>>**:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

*«Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ* *Ա. Գրիգորյան*